


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԲԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԷ Ե ՈՒՂՂԻ ԱՌ  
Խմբագր. ԱՐՇԱՒՈՅՍ ԵՐԱՅԻՐԻ  
ԳԱԶԻՐԷ (Հասցեգրանիտ)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒՍՏՈՒՆ ԸՇՄԱՔ  
Տարեկան, ողջ յսակին. 60  
Վեցու նիայ » 35  
ԵՍ Ե ԵՍՏՈՒՆԸ  
Տարեկան Ֆրանկ 20  
Վեցամսայ » 12

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆԸ ԿԱՆԽԿ Ե  
ՆԻ ՔՂՓԱՏԱՐԻ ՅԱԽՔԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղում  
գրութիւն ԵՍ ՀԵՆ ՏՐՈՒԻՐ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Թերթիս նիւթական մատակարարութիւնը պայմանաւորեալ ընկերներէն Տիար Ս. Դարբինեան ստանձնած ըլլալով, բաժանորդաց ստացականներն անոր ստորագրութիւնը պիտի կրեն, խմբագրութեան կնքոյն հետ:

**GEORGES AVÉROFF**  
ԺՕՐԺ ԱՎԵՐՕՖ

Այս նշանաւոր անունը Եգիպտոսի մէջ շատ ծանօթ է թէեւ, սակայն անօգուտ չէ յիշատակել հելլէն գաղութի այս մեծ մարդուն կեանքը, որ կրնայ իւր օրինակ ծառայել ամեն անոնց, որոնք աղին զգացմանց ախարներէն կը ներշնչուին:

Ժօժ Ավերօֆ, Եգիպտոս նահանգի Մեծօջո գիւղին մէջ ծնած է 1818 մարտ 15/27 ին: Իւր ծննդավայրը թողած է 22 տարեկան հասակին մէջ և Եգիպտոսը իրեն զարգացման և յառաջգիմութեան վայրը ընտրած: Թէեւ աղքատ, բայց վաճառականական գործերու մէջ իրեն ցոյց տուած կորովին և ուղղամտութեան շնորհիւ յաջողած է հիմնել տուն մը, որ քիչ ժամանակի մէջ հսկայաքայլ յառաջգիմութիւն ունենալով, 1886ին վերջնականապէս հաստատուած է յԱլեքսանդրիա: Ահա այս ժամանակէն կ'սկսի իւր հայրենասիրական զգացմանց համբաւին տարածումը:

Իւր կենսագիրներէն մին կ'ըսէ թէ՛ Յունաստանի համար իւր զգացածներն խանդավառ սիրոյ ամենաազնիւ գրօշմը կը կրէին և իւր զբաղմանց մէջ ամենէն առաջին տեղը զբաղուողն եղած է օգնել չքաւորներուն, որբերուն և տկարներուն, անոր համար Երախտապարտ Հայրենիքը «ազգային մեծ բարերարի տիպոսը» տուած է իրաւամբ: Արեւելքի ամեն երկիրներուն մէջ, ուր հելլենացին կ'ապրէ, իւր անունը հումանիչ է գթութեան և բարեգործութեան. կը մտնէ աղքատին խրճիթը հոն յոյս ներշնչելու համար, և որբւայրին՝ անոր գթաւատ ձեռքը տարածուած կը տեսնէ իւր զաւակաց վրայ, որոց միակ նեցուկը անողորմ մահուան կլափին մէջ անէտ հաճ է:

Մեծօջո, իւր ծննդավայրը՝ միակ աւարկան եղած է իւր բարձր հոգածու-

թեան և Ավերօֆի վեհանձնութեան արդեամբ՝ Մեծօջո ունեցած է կանոնաւոր դպրոցներ, շքեղ եկեղեցիներ, աղքատներու համար ձրի դեղարաններ և բժիշկներ, որոնք անխափր կերպով իրենց ձրի ինամբները տուած են ամենուն:

Դաստիարակութեան համար ունեցած եռանդին և յունական դրականութեան տարածման համար յանձն առած մեծամեծ զոհողութեանց շնորհիւ, իւր ծննդավայր գիւղը յառաջգիմութեան պայքարներուն հանդէպ զարգացեալ երիտասարդութիւն մը ունի: Բարեսիրական զգացմանց տեսակէտով Մեծօջոի հասարակութեան համար շուայլած միլիօններու գումարներով չի սահմանափակիր ժ. Ավերօֆի առատաձեռնութիւնը, նա 1868ին կրէապի ապտոմբներուն ալ 50,000 ֆրանք նուիրեց:

Ասանցմէ զատ Էյֆէչիէճի զինուորական վարժարանին շինութիւնը, Էֆէչի բանտը, Արիէնի բազմարուեստեան վարժարանը Ավերօֆի համար 1,800,000 ֆրանք արժեւով հանգերձ, երկրաշարժէ վնասուողներուն օգնութեան հասնելու եւ գրական շահեկան գործերու սպազբութեանց համար պատկառելի գումարներ յատկացուց: Թրիփոլիսի նախարարութեան օրով, Երկու միլիօն ֆր. հելլենական կառավարութեան հանրային օգտին համար և մէկ միլիօն տրախիսի աւելի ալ Սքաս Բաւնաթեկալիսի նորոգութեան համար տուաւ:

Աղեքսանդրիոյ մէջ ժօրժ Ավերօֆը հելլենական գաղթականութեան գլխաւոր նեցուկը կամ լաւ եւս է ըսել հոգին եղած էր. Էյվակիէյիզմոզ եկեղեցին, Յունական կիլասիոսնոցը, գաղթականութեան զարգացմանը կը պարտին իրենց գոյութիւնը և յառաջգիմութիւնը: Ինքնաբերաբար մէկ անգամէն 250,000 ֆրանք նուիրեց գաղթականութեան պարտքերուն թիթեւացմանը համար և 25,000 ֆրանքի ալ տարեկան նուէր մը ըրաւ աղքիկներու հելլենական փախսիօնային, որուն շինութիւնը 300,000 ֆրանքէն աւելի արժած էր:

Հելլէն գաղթականութիւնը այս ամենուն փոխարէն իւր երախտագիտական զգացումներն յայտնելու համար, գաղթայրներուն ամենամեծ սրահին մէջ անոր արձանը կանգնել տուաւ և զայն գաղթականութեան մշտնջենական նախագահը անուանեց:

Ամբողջ յունական ընկերութիւնները, ըլլան գրական, ըլլան արհեստական, ներբողիւ և երախտագիտութեամբ կ'արտասանեն ժօժ Ավերօֆի անունը և անկեզժ յշտով կուլան իւր մահուան վրայ, որովհետեւ իր եռանդուն հայրենասիրութեամբը, անհամար բարեգործութեամբը և մարդասիրութեամբը, գիտցաւ Յունաստանի արդի դէմքերուն մէջ ամենէն նշանաւոր տեղը գրաւել:

Ժօժ Ավերօֆի 81 ձմեռներու բեռան տակ անշնչացած մարմինը գեռ մէկ օր առաջ ամենամեծ շքով և անթիւ պսակներու մէջ եկեղեցի տարուեցաւ, ուրկէ գերեզմանատուն փոխադրուելով պիտի ամփոփուի իւր վերջին հանգստարանին մէջ:

Հելլէն աղբը ժօժ Ավերօֆի ժառանգորդներն կ'ունենայ իւր պարծանք, և չքնազգի տ բարերարի մը պաշտելի գերեզմանը:

Արշալոյսի խմբագրութիւնը թարգման հանդիսանալով Եգիպտոսի գաղթականութեան, իւր ցաւակցական զգացումները կ'արտայայտէ Մեծ բարերարին ներկայացուցիչներուն, որոնք, ինչպէս բէտք է հաւատանք, հանգուցեալ ժօժ Ավերօֆի հայրենասիրական և ազգասիրական զգացմանց շարունակութիւնը պիտի լինին հելլէն գաղթին համար:

**ԱՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ**  
**ՀԱՅ ԿՂԵՐԻՆ ՄԵՋ**

Օտար եկեղեցիաց հոգեւոր պետերու կրօնական և քաղաքական վարչագիտութեան հեղինակաւորութիւնը ակնհայտ ա'յն գերակայ բարձրութեան, ա'յն հզօր գերին մէջ է, որու շնորհիւ այդ եկեղեցիներուն և անոնց պատկանող համայնքին մէջ կը տիրէ բացարձակ իշխանութիւն, օրինակելի խիստ կարգապահութիւն, աստիճանաւոր սերտ անջութիւն և կատարեալ ներդաշնակութիւն:

Պապական մականը Վատիկանէն կը շարժբայց կը վարէ աշխարհի բոլոր ուղղափառ կողմած համայնքները: Անոր կրօնական իշխանութեան գործադրուող օրէնքներու խտուածիւնը նոյնն է Վատիկանի շուրջը խտացած համայնքներու համար, որչափ հեռաւոր վայրի մը երկու տնւոր հասարակութեան համար: Պապի մականը կը շարժի ըսինք. բայց անոր հպած ու թոժած Սուվերակուաւորներու ամբողջ լէզիօնն ալ կը շարժի, ու անոր հաւատարիմ արքայական շահերը հպատակողի ընդօրինակելի յամառութեամբ այդ մականի գերակշիռ հպումը աստիճանական յարա-

բերութեամբ կը հասցնեն մինչև վերջին ծայրերը ա՛յն եկեղեցական հաւաքական կազմակերպութեանց, որ միապետական կառավարութեան ձեւի բնութարարութիւնն ունին, կամ, ըսենք, ուղեղային կազմակերպութեան կեղծոնախոյս զօրութեան բնութարարութիւնը. կեղծոնական ուղեղը՝ Պապը, ողնայարի սեան երկրորդական ուղեղի յարաբերութեամբ, եւ սա՛՛ զանկիծոնական շղթայի յարակցութեամբ մարմնոյ զգայական շղթայի մինչև վերջին բլթին հետ փոխադարձ առնչութեան մէջ կը գնէ նոյն մարմնոյ բոլոր մասերը: Ահնարեւ է թէ պապական եկեղեցիին մէջ տիրող միապետութիւնը բերտ ոյժին վրայ չէ կրթնած. իր կռուանն է գծուած որոշ օրէնքը, ու իր ամբողջ զօրութիւնը կը կայանայ այդ օրէնքներուն կէտ առ կէտ հաւատարիմ գործադրութեանը վրայ հակելուն մէջ, իո՞վ վերջինիս համար անհրաժեշտ է ունենալ կրօնական քաղաքագիտութեան զօրութիւնը որ հեղինակաւորութիւն:

Հայ համայնքի կրօնական կառավարութեան օրէնքներն եւս կեղծոնախոյս զօրութեան բնութիւնն ունին. նոյն Պապը, կրօնական քիչ տարբերութեամբ, ունինք նաեւ մենք յանձին Ամենայն Հայոց Հայրապետի, նոյն շղթայացման օրէնքները, նոյն յարաբերական աստիճանաւորումները, նոյն առնչական գրութիւնը մինչև հայ ժողովրդի վերջին անհատին հետ ունի նաեւ հայ կղերը: Բայց ի՞նչ բանի մէջ կը կայանայ արգիւտ այն բացարձակ եկեղեցական անիշխանութիւնը եւ փոխադարձ դէպի կղերը ժողովրդային այն ցրտութիւնը, որ հայ ժողովրդեան մէջ կը տիրապետէ. ահաւասիկ խնդիր մը որով պէտք է գրադիլ:

Նախ քան մեր եկեղեցւոյ անիշխանական դրութիւնը եւ անոր պատճառը մասնանիշ ընելու, հարց մը կը ներկայանայ ինձ, որու լուծումը սերտ կապակցութիւն ունի սակայն խնդրոյն հետ: Այդ մեր Բաղաբական Վարչային գրութիւնն է, որը ժամանակաւ միացուցած ենք կրօնական իշխանութեան հետ եւ այսօր, ըստ երեւոյթին, անկարելի կը համարինք բաժանել իրարմէ:

Լինելով ազգային իշխանութիւնը կորսնցուցած ազգ մը մեր ազգային Բաղաբական Վարչութիւնն եւս գրած ենք ամբողջովին կրօնական ձեւերով մէջ, զուցէ կրօնքի երբեմնի զօրութիւնը պայմաններէն խաբուած: Լինելով զուտ կրօնական ազգ մը, մեր քաղաքական իրաւունքներուն անդիտակ, զանոնք զոհած եւ ձուլած ենք կրօնականին հետ. մինչդեռ կրօնքը մարդկային հոգեկան գրութեամբ միշտ զբաղուելով, գոնէ մեզ համար գործօն դեր մը չէ ստանձնած եւ առնասարակ անստեան, անսիրտ ըրած է մարմնականը, որը, ընդհակառակը իր բոլոր պահանջներով սերտօրէն շղթայուած է քաղաքական աշխարհի հետ: Մեր բոլոր ազգային քաղաքական իրաւունքները ամփոփելով յանձին կրօնական անձնաւորութեան մը, որ Պատրիարք կը կոչուի, մենք ժամանակին շարաչար սխալած ենք ազգովին. ահա այդ սխալը պէտք է ըմբռնել եւ գարմանել ազգովին բաժանելով կրօնականէն մեր քաղաքական իրաւասութիւնները, որմէ կախումն ունի եւ մեր քաղաքական իրաւունքներու բռնաբարութեանց կատարեալ ազատութիւն գտնելը: Ա՛յլ է պետական մարդ, ա՛յլ է կրօնական մարդը: Մեր այդ երկու զօրութեանց յանձին մէկ մարդու միացումէն տըկարացած ու հիւժուած ենք այսօր կատարելու պէտք: Տիրող կառավարութիւնը պիտէ ձարպիկ կերպով օգտուել մեր այդ ասիկարի տգիտութեանէն: Մեր ազգային թշուառութեան մեծագոյն բաժինը անոր մէջը փնտռենք:

Արտառոց գաղափար մը թող չի նկատուի կի՛նք ըսեմ թէ մեզ Պատրիարք պէտք չէ բնաւ, քաղաքական տեսակէտով, (ա՛յլ է կրօնական տեսակէտով), մեզ պէտք է միայն մի բանիւրուն Ազգապետ, վարչապետ մարդու բոլոր առնձնայատկութիւններով օժտուած, բոլորովին զերծ կրօնական կապակցութեանէ, որը պաշտպանէ ազգային քաղաքական շահերը. ու այդ ընել միայն եւ միայն մեր ձեռքն է, ճանչնանք մեր իրաւունքը եւ ակնապիշ սպասենք առաջին առիթներուն, քանի որ օրուայ երկրուն պատրիարքութիւնը մշուշի մէջ լիաթոք ու գօտեպիւղ սուրացող անդեկ նաւն է բաղիւնելու խիստ մօտիկցած: Երկար ժամա-

նակէ ի վեր մեր ասիկար Պատրիարքներու շարքերը (խիստ որոշ յարգելի բացառութեամբ) արդէն, կարծեմ, բաւական պիտի ըլլան մեզ համոզելու թէ պէտք է վերջապէս բաժնել իրարմէ մէկ մարդու վրայ ծանրացած այդ երկու արդէն ինքնատիւնքսն մեծ ու կարեւոր պաշտօնները, ու տալ վեղարը վեղարաւորին զուտը ու եկեղեցի զրկել աղօթելու համար, եւ սանձադրական օրէնքներու զիրքը, թեթեւ սրբազրութեամբ միայն, քաղաքագէտ-վարչապետին թեւին տակը տալ եւ զան ուղարկել Երւստղի խուլ գոնեքը բաղիւնելու:

Պանք այժմ մեր եկեղեցական անիշխանութեան Ամենուս յայտնի է արդէն որ Հայոց ընդհանրական Հայրապետը մեր եկեղեցական իշխանութեան քաղաքական ու անասան միապետն է համարուած (ու այնպէս ալ պէտք է ըլլայ): Անոր իրաւասութիւնները անձեռնմխելի ու անբարարելի գերիշխանութիւններ են: Գործառւ. յաջողութեան անսանցութեամբ մինչև մեր օրերը հասած հայրապետներու սրբազան շարք մը նուիրական իրաւունքը կուտայ էջմիածնական Մայր Աթոռին վայելելու առաքելական գահու անհղծ յաջողականութիւնը անոր հակառակի ազգակործան գրութեան մը հետեւիլ կը նշանակէ. Կրօնքի ծառայող բոլոր կղերականներ, առանց բացառութեան պարտաւոր են զուտ խոնարհել այդ գահին եւ պարտաւոր են փոխադարձ սերտ յարաբերութիւն մշակելու անոր հետ, ըլլան Պատրիարքներ, ենթակայ Կաթողիկոսներ կամ պարզ եկեղեցականներ:

Քրիստոնէայ եկեղեցիներու հակակիր դերը, ազգերու կրօնականութեան գաւաղիւր ոգին դէպի մեր կրօնքը, յիշաւ թէ եւ երբեմն մեր հեռագետ ազգայիններուն իրաւունք տուին հիմնելու նմանօրինակ հայրապետական մասնաւոր գահեր Վասուրականի (Աղթամար) եւ Կիլիկիոյ (Սիս) մէջ, անոնց տալով չափաւոր մենաշնորհներ աւանց սակայն ընդհանրական Հայրապետի լիազօր իրաւասութիւններով օժտելու. քաղաքային գրութիւնը եւ սրբավայրի նշանակիչ հանգամանքները, այո՛, թէ եւ ստեղծեցին Երուսաղէմի եւ Կ. Պօլսոյ պատրիարքական աթոռները. առանց սակայն անոնց տալու կրօնական ո՛ր եւ է բարձր իրաւասութիւնն առաւել քան մի ո՛ր եւ է թեմական առաջնորդի իրաւասութեանէն, սակայն այսօր այդ Պատրիարքներն ու Կաթողիկոսարանները շնորհիւ զանազան ժամանակներու մէջ իրենց կորզած խել մը անիրաւ իրաւասութիւններու ելած եւ զուտ անկած, կամ աւելի ճիշտ, միապետաբար կը գործեն ինքնիշխան, եւ իրենց հետ գործելու ալ գաւաղացութեանը կը ներշնչեն իրենց ձեռքի տակ ոչխարի նման վարուող ամբողջ կղերական գաղութը որ կ'անգիտանայ թէ որո՞ւ պարտաւոր էր հնազանդիլ եւ որու կը հետեւի այսօր, ու այսու անիշխանութեան մասնաւոր մեր սեւասքեմ վեղարաւորները նոյնչափ անիշխանական մեր քահանայից լէզվօնին հետ ձեռք ձեռքի կապած կը վարեն անխղճաբար մեր եկեղեցու ընդհանուր Պատրիարքանակ անկէ զեկալարուելու:

Արդ, ի նկատի ունենալով մեր հինգ անհերքահանակ աթոռներու լարուած դրութիւնը, իրար դէմ խիզախ ու ըմբոստ կացութիւնը, կործանարար ներքին խուլ կռիւր եւ բարձրագոյն Պետի իրաւասութեանց դէմ իրենց ընդդրումը, մեզ, պարզ ժողովրդային անհասանելու ուրիշ բան ընել չի մնար, բայց կի՛նք իրաւունքը լիազրական բերանով պոռալու տիրող այդ անիշխանութեան դէմ, ու անկէք որոտալու այդ անիշխանութեան գաւաղիւրներու սեւ ձակտին, որոնք ժողովրդի միակ միւթարութիւնն հանդիսացող կրօնքի ըստինքն ալ կը թուաւորեն:

Տիրող այդ անիշխանութեան սանձահարութիւնը միայն եւ միայն հայրապետական կարող ձեռքէն կ'սպասուի: Նա է միայն որ կարող է զուպիլ ազգակործան պատրիարքները, Կիլիկիոյ եւ Աղթամարի ենթակայական կաթողիկոսական գաւաղութեան կնճիւր բաժնալիլ եւ անոնց իսկական պաշտօնը գծելով: Նա է միայն, որ կարող է հրամայողի իրաւունքով երկար ժամանակէ ի վեր անհալի մնացած առաջնորդական թեմերու ընտրութիւնները փութեցնել տալու, պարտաճանաչ քահանաներու առաքելական լէզվօններով հեղեղել տալով հո՛ն, ուր հայ տարրը կոչնչանայ. ու միայն

կարող է ճշդիլ տալ ազգապատկան հողերու ու կալուածներու տարիներէ ի վեր երեսի վրայ ճրգուած հաշիւները, զանոնք ի մի հարուած ազատել սալով ցեցակիր խնամածուներու աղտոտ ձեռքերէն. նա կարող է կեղծօնացնել եւ միայն այսու զօրացնել կրօնական կազմակերպութեան զրութիւնը եւ մաքրել այն քառա առաջնորդարանները որ սեւ գղեակներու երեւոյթն են առած եւ ուր կը շարժին բանակները ժանդ ու ժահր բուրդ սեւաքուրձ խրտուիլակներու, որոնք մահաւմերձ ազգի արեւնածոր երակներուն կպած արդրութիւնը կը յորջորջուին:

Անէ՛ծք իրենց:  
Պէտք է փութալ եւ փութացնել քանի որ դեռ եկեղեցւոյ անճարակ աւելածուներն եւ ասիկար բարապանները չեն փորձած ըմբոստանալ, ապա թէ ոչ այդ անիշխանութեան մէջ շուտով կը գոյանան բազմաթիւ օձեր ու զետուներ, ինչպէս որ բնութեան օրէնքն է, ազտա ու արեւազուրկ մութ անկիւններու մէջ լքուած կաթիլն ու մածուներն մէջ կը գոյանան որդի ու ճճիներ, որոնց գոյութիւնը իրաւունք է պատճառի յարաբերական տեսակէտով:

Աղեւանդրիա ՊԱՊԻԿ-ՃԳՆԱԻՈՐ

Ա. Զ. Գ.

Ամեն անոնք, որոց մեր թերթը կը զրկուի եւ առաջին երկու թիւերն մեղի չեն վերադարձնեն, մեր բաժանորդաց ցուցակին մէջ կը նշանակուին իբրեւ բաժանորդ: Լրագրաց Խմբագրութիւններէն կը խնդրուի փոխանակել իրենց թերթերն:

Ա. Զ. Գ. Ա. Զ. Գ.

Ինչպէս կը տեղեկանանք, Պատ. Քաղ. Ժողովն իւր վերջին նստին մէջ որոշած է յետ այսու 15 օրն անշամ մը գումարուիլ: Կը փափաքէինք որ այս նստի մէջ որոշէր նաեւ թէ, (թէ եւ ցարդ ո՛ր եւ է դիմում ըրած չենք) յետ այսու պիտի բարեհաճի պաշտօնապէս Արշաղոյսի հաղորդել այն որոշումներն, որոնք հանրութեան վերաբերութիւն ունին:

Հայկական նահանգաց կառուրածներու թարգմանութիւնը յաջորդ թուով պիտի սկսինք, տեղոյ անձկութեան պատճառաւ:

Օտար երկիրներու մեր բաժանորդներն, իրենց բաժնեգինը կրնան մեզ հասցնել «Մանուս-փոսթ» ուղի մը ուղղելու առ՝

**E. TOROSSIAN**  
DIRECTEUR-RÉDACTEUR DU JOURNAL "ARCHALOUICE",  
LE CAIRE (Egypte)  
Աղեւանդրիոյ համար գործակալի մը պէտք ունինք, ստանձնել ուղղութիւնը կը խնդրուի գրաւորապէս դիմել Արաւոյսի խմբագրութեան:

ՏԵՂ. Ա. Զ. Ա. Զ. Ա.

Մեր տեղացի պաշտօնակիցներէն շատերը կ'ըսեն թէ Մէրտարը Անդրկայէն վերադարձին Պօլսո պիտի հանդիպին, ուր Սուլթանը իրեն Մարաջախտի աստիճանը պիտի շնորհէ:

Յար  
—Եգիպտական կառավարութիւնը հեռապիւր մը ընդունեց, որ պաշտօնապէս կիմայնէ թէ՛ խտրական Մահոռաա զբոստնաւը Հռոդոս հասեր է:  
Վիհ, Սուլթանը հրաւիրած է Բարձր.



ներու թիւ պէտքերու թորախտէ եւ ազիքներու ծիրախտէ:

Իւր «Առողջարանութիւն Հիւժարտի» անուն գրքոյ կին մէջ՝ Տր. Հարրիս աւելի յառաջ կ'երթայ եւ կ'ըսէ: «Գիտութեան ներկայ վիճակին մէջ յառաջացեալ թորախտաւոր մը պէտք չէ արտօնուի ծովային ճամբորդութիւն ընել՝ եթէ օգուէտ խնայելիներու մէջ մեկուսացեալ պիտի չմնայ: Ես ինքս թորախտաւոր մը բուժեալ առաւել քան քառորդ դար մը յառաջ, պիտի մերժեմ այժմ ծովային ճամբորդութիւն ընել ա'յնպիսի անձի մը հետ որ յառաջացեալ թորախտ ունի, ինչպէս պիտի մերժէի բնակիլ Ինկէնտէնի մեծ հօթէլներու մէջ՝ ուր ամեն ձմեռ կը հաւաքուին ամեն աստիճանի թորախտաւորներ թունաւորելով օդն իրենց շունչով եւ թորախտի մանրէներով:»

Ինչ որ կը ճշդուի Ինկէնտէնի մեծ հօթէլներու համար, նոյնը ճշմարիտ է նաեւ Գահիրէի, Ազեքանդրոյի եւ ուրիշ հօթէլներու համար, ուր ամեն տարի կուգան ձմեռել բազմաթիւ եւ րոպացի ազնուականներ՝ որոնց մէջ անպակաս են յառաջացեալ թորախտաւորներ: Այս վերջիններն, որոց խումբն լի է մանրէներով՝ անհոգութեամբ կամ սգիտութեամբ կը թքեն գետին՝ կամ իրենց ննջասենեակներուն մէջ՝ խուլը կը չորնայ, կը փոշիանայ եւ կը ցրուի օդին մէջ. առողջ մարդիկ օր մը կուգան հիւրընկալուիլ այդ հօթէլներու մէջ ու կը շնչեն այդ փոշիներն ու կը վարակուին, քանզի թորախտը, շատ մը դէպքերու մէջ, յառաջ կուգայ թորախտաւորներու շորցած եւ փոշիացած խուլներուն ներշնչմամբ:

Վերջին ծայր զգուշութիւն պէտք է ընել սրճարաններէ, ուր կը յաճախեն ամեն կարգի եւ աստիճանի հիւանդներ եւ կը մնան հոն ժամերով: Ամենայն խնարհութեամբ եւ անկեղծութեամբ խորհուրդ կուտամ մեր հիւանդ բարեկամներու որ ընա'ւ ոտք չ'կոխեն սրճարաններու եւ հառարակաց վայրերու մէջ՝ ուր օդն այնքան ապակասեալ է: Չայս կ'ըսեմ նախ՝ իրենց առողջութեան եւ հանգստեան համար, երկրորդ՝ որ չ'իցէ թէ իրենց պատճառաւ ուրիշներու առողջութեան վիճակն ալ խանգարի:

ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ԾԻԾԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ

Ֆրանսայի մէջ:

Ինչպէս մը առաջին անգամ ըլլալով Փարիզ կ'երթայ եւ անյազ աչեքով կը դիտէ խանութներու եւ տուներու վրայ ոսկեգոծ տառերով գրուած ազգաբարոյքի խնկներն:

Հանդիպելով սեղանաւորի մը, որոյ խանութը գուրկ էր այդ առաւելութիւններէն, զարմանով կը հարցնէ.

- Պարոն, դուք ի՞նչ կը ծախէք:
- Ի՞նչ գրուի . . . :
- Ըսել է, պարոն, ձեր խանութին մէջ շատ յաջողակ առեւտուրներ քրած ըլլալու էք, որովհետեւ — ինչպէս կը տեսնեմ — անկէ մէկ հաս միայն մնացած է:

Դասարանին մէջ.

Բրոքսուոր մեծկակ մագնիսի մը երկարի կրտսերն 2-3 ոսկ հեռուէն փառէր փորձերը յաջող կերպով առակեցաց առջեւ կրկնելի վերջ կը հարցնէ.

— Պարոններ, ասկէ առաջ երբեք տեսած էիք այսպիսի ձգողական գորութիւն մը:

Առակեցներէն մին որ բաւական արիւնքս եւ արամիք էր, կը պատասխանէ.

— Այո՛, բրոքսուոր, ես գեղանի աղջիկ մը կը նանչնամ, որ ամեն կիրակի զիս առ ինն կը փառէ 13 մղոն հեռաւորութիւնէ . . . :

Հայր եւ որդի.

Հայր. — Թո՛, կարապետ, ես եզրի չըսի՞ որ միշտ շիտակ պիտի խօսիս:

Որդի. — Այո՛, հայրիկ, այնպէս է, բայց ըսիք նաեւ որ երբեք բանի մը մոլին չըլլամ: Եթէ լրջ այն շիտակ խօսելու մոլութիւնը . . . :

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

Ա. Թ. ՍԵՏԵՔՃԵԱՆ

Իւր լուսանկարչատունը կ, Պօլէն փոխադրելով ի Գահիրէ, ԲՍՄՔԱՎ վաճառատան փողոցը, Գործունըրի Բարիզիէնի քով, Օթէլ Մահրուայի մէջ հաստատած է:

Ամենամեծ խնամք կը պատրաստէ ամեն մեծութեամբ լուսանկարներ, խիստ գիւրամատչելի գներով:

Իրեն գիմող յաճախորդները շատ գոհ պիտի մնան, թէ՛ լուսանկարներու մաքրութեան եւ թէ՛ գոյներու մնայունութեան կրկին տեսակէտներով: 1—5

ՏՕՐՔԻՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԵԱԲՈՅԺ Ապսին, Շարէ Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաներ:

Կը գագրեցնէ վայրկենապէս աղուայի ցաւերը ամբրիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերովն:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխատորէ: 2—10

Ա Ձ Դ

Տիկին Սօֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գահիրէ հաստատած ըլլալով, պատուունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատրաստ է իւր խնամքները տալ իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղճամիտ աշխատութիւնը զինքը քաղաքիս առաջնակարգ մանկաբարձերու կարգը կանցընեն: Դիմել Պէն-էլ-Սուրէն, Դուրունֆիշ փողոց թիւ 53: 2—6

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ - ԷԼ - ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստըր) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխատորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը գագրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) զրուիները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիանալի արդիւնք տեսնուած է: Եիշը 8 զըշ: ողջ (2 ֆրանք):

Բուտրա՝ սքանչելի տեսակէն, որը միանգամայն մարմինը քրտինքիսէ զերծ կը պահէ:

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն բնական պիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրպատուի մէջ միակը:

Լոգանքի ջուր, մարմնոյ թէ՛ վախկութիւն եւ թէ՛ անուշահոտութիւն կուտայ:

Ակուայի փոշի եւ ջուր. մին մտքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Օտար երկիրներէ եւ գաւառներէ կանխիկ գրամով եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Սոյն ջրերէն կարելի է գտնել նաեւ Ապտին, Տայրէի Սանիէի գիմաց Պազար Թալա՛ վաճառատունը:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փութանակենք բոլոր ազգաց գործածած նամակագրոյնները: 2—4

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի Գ. Ա. ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՍՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տաղաբական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազղեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Գրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց եւ փաստականներու սյազրական ամեն պիտոյներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոտանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագոյնութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատուի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant, Dr A. S. HAGOPIAN